UPower

# Տեղեկագիր կանանց սոցիալական ձեռներեցության մասին

ՀՈՒԼԻՍ 2024 | N. 3

# ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## Միացե՛ք մեզ

Մենք ուրախ ենք հայտարարելու այս սեպտեմբերին կայանալիք ազգային աշխատանքային համաժողովների մասին:

Այս միջոցառումները միտված են կանանց, չափահասներին ուսուցանող դասընթացավարների և քաղաքականություն մշակողների միջև խրախուսել երկխոսությունը և խորհրդակցությունը՝ կանանց հզորացմանն ու ձեռներեցության զարգացմանը ուղղված նոր քաղաքականությունների կերտման նպատակով:

**Միջոցառման մանրամասներ.**

Տևողություն. Մոտավոր 7 ժամ

Օրակարգում ներառված է.

- Նախագծի ներկայացում
- Քննարկում ազգային զեկույցի, MOOC պլատֆորմում տեղակայված ձեռնարկի վերաբերյալ
- Ոգեշնչող հարցազրույցներ չափահասներին ուսուցանող դասընթացավարների և դասընթացներում ներգրավված կին ձեռներեցների հետ
- Կին ձեռներեցների հաջողված պատմությունների ներկայացում, որոնք հետագայում կարող են դառնալ մենթորներ և օրինակելի կերպարներ գործարար կանանց համար

Համաժողովների ընթացքում հավաքագրված արձագանքներն ու տեսակետները կներառվեն համապարփակ քաղաքականության առաջարկությունների փաթեթի մեջ: Դրանք կհամալրվեն ծրագրի ընթացքում բացահայտված լավագույն փորձով: Վերջնական փաստաթուղթը կհրապարակվի անգլերեն լեզվով, իսկ թարգմանված ամփոփագրերը հասանելի կլինեն ծրագրի կայքում:

# ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԻՌԼԱՆԴԻԱՅՈՒՄ

Նոյեմբեր ամսին առցանց միացե՛ք Իռլանդիայում կայանալիք մեր մեծ եզրափակիչ համաժողովին, որտեղ կբացահայտենք ծրագրի արդյունքները և կներկայացնենք քաղաքականության մշակման համար նոր առաջարկությունները՝ տոնելով ծրագրի հավաքական ջանքերն ու ձեռքբերումները:

“

Պարզապես մի հանձնվեք փորձելու անել այն, ինչ իսկապես ցանկանում եք անել: Այնտեղ, որտեղ կա սեր և ոգեշնչում, ես չեմ կարծում, որ դուք կարող եք սխալվել:

Էլլա Ֆիցջերալդ - Երգչուհի

Co-funded by the European Union

KA220-ADU-992AC3A1